WIRELESS EMERGENCY ALERTS

A nationwide system providing lifesaving information for the state of California.

**Ազգային համարգ, որը կենսական նշանակության տեղեկություն է տրամադրում Կալիֆորնիա նահանգին:**

# Sample Alert and Warning Messages

## Ահազանգման և նախազգուշացման հաղորդագրությունների նմուշներ

Below are sample messages alerting agencies can use as a guide to draft a specific message relevant to a local emergency. These samples are not exhaustive. Final messages should always be tailored to the specific needs of the unique event precipitating their need.

Ստորև բերված են հաղորդագրությունների նմուշներ, որոնք ահազանգման գործակալությունների համար կարող են ծառայել ուղեցույց՝ տեղական արտակարգ իրավիճակների հետ կապված հատուկ հաղորդագրություն կազմելու համար: Այս նմուշները սպառիչ չեն: Վերջնական հաղորդագրությունները միշտ պետք է կազմվեն այն առանձին միջադեպի հատուկ կարիքներին համապատասխան, որով պայմանավորված առաջացել են այդ կարիքները:

# Evacuation Sample Messages

## Տարհանման հաղորդագրությունների նմուշներ

### Long Messages (Mass Notification Alerts)

### Երկար հաղորդագրություններ (Զանգվածային ծանուցումների ահազանգ)

1. This is [Agency] with a mandatory evacuation order for [Location]. Take the following prot ective actions and leave immediately: 1. Gather all family members. 2. Gather all pets. 3. Gather only essential items (e.g., food, water, medication) 4. Turn off all appliances and lights in your home. 5. Secure all doors and windows. The evacuation route is: [Evacuation Route]. An Evacuation Center is open at [Name and Location of Evacuation Center]. For more information, please tune into local radio and television stations, visit [url] or call [###-###-####].
1. Սա [Agency] է՝ [Location]-ի համար պարտադիր տարհանման հրամանով: Կատարեք հետևյալ պաշտպանիչ քայլերը և անմիջապես հեռացեք: 1. Հավաքեք ընտանիքի բոլոր անդամներին: 2. Հավաքեք բոլոր ընտանի կենդանիներին: 3. Հավաքեք միայն առաջին անհրաժեշտության իրեր (օրինակ՝ սնունդ, ջուր, դեղորայք): 4. Անջատեք ձեր տան բոլոր սարքերն ու լույսերը: 5. Ամրացրեք բոլոր դռներն ու պատուհանները: Տարհանման երթուղին է՝ [Evacuation Route]: Տարհանման կենտրոն է բացվել [Name and Location of Evacuation Center]-ում: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք միացնել տեղական ռադիոյի և հեռուստատեսության կայանները, այցելել [url] կայքէջը կամ զանգահարել [###-###-####] համարով:

1. [Agency] is issuing a mandatory evacuation order for [Location]. The National Weather Service has issued a flood warning for [Location]. All residents in the impacted area should evacuate immediately. An Evacuation Center/Shelter is open at [Location]. For more information, go to [Insert Resource]. Please listen to [Radio Station] for updated details.
1. [Agency]-ը [Location]-ի պարտադիր տարհանման հրաման է արձակում: Եղանակի կանխատեսման ազգային ծառայությունը [Location]-ի համար ջրհեղեղի մասին նախազգուշական հաղորդագրություն է տարածել: Արտակարգ իրավիճակի վտանգի ենթակա տարածքի բոլոր բնակիչները պետք է անհապաղ տարահանվեն: Տարահանման կենտրոն/Ապաստարան է բացվել [Location]-ում: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [Insert Resource]: Խնդրում ենք լսել [Radio Station]-ի հաղորդագրությունները թարմացված մանրամասն նորությունների համար:

### Short Messages (Mass Notification Alerts)

### Կարճ հաղորդագրություններ (Զանգվածային ծանուցումների ահազանգ)

1. Wildfire threat-Evacuation Order for [location]-Leave Now- Details on [Agency] website.
1. Անտառային հրդեհի սպառնալիք. [location]-ի տարհանման հրաման. Անմիջապես հեռանալ. Մանրամասները [Agency]-ի կայքում:

# Shelter-In-Place Sample Messages
# Տեղում ապաստարանի տրամադրման վերաբերյալ հաղորդագրության նմուշներ

## Long Messages (Mass Notification Alerts)
## Երկար հաղորդագրություններ (Զանգվածային ծանուցումների ահազանգ)

2. This is [Agency] reporting mandatory shelter in-place for residents in [location] due to a hazardous materials release. 2. Bring pets indoors if you can do so quickly. Close all windows and doors. 4. Turn off all air conditioners and heating systems blowers. 5. Close fireplace dampers. 6. Gather radio, flashlight, food, water, and medicines. 7. Call 911 only if you have a true emergency. You will be advised when the dangerous conditions have passed, and it is safe to go outside and resume normal activities. For more information, please tune into local radio and television stations, visit [url], or call [###-###-####].
2. Սա [Agency]-ն է, որը հաղորդում է տեղում [location]-ի բնակիչներին տրամադրվող պարտադիր ապաստարանի մասին՝ պայմանավորված վտանգավոր նյութերի արտանետմամբ: 2. Կենդանիներին արագ ներս բերեք, եթե կարող եք: Փակեք բոլոր պատուհանները և դռները: 4. Անջատեք բոլոր օդորակիչների և ջեռուցման համակարգերի օդափոխիչները: 5. Փակեք բուխարիի կափույրները: 6. Հավաքեք ռադիո, լապտեր, սնունդ, ջուր և դեղամիջոցներ: 7. Զանգահարեք 911 միայն այն դեպքում, եթե իսկապես արտակարգ իրավիճակ է ձեզ մոտ: Ձեզ խորհուրդներ կտան, թե երբ վտանգավոր իրավիճակը կանցնի, և անվտանգ կլինի դուրս գալ և վերսկսել ձեր բնականոն գործունեությունը: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք միացնել տեղական ռադիոալիքը և հեռուստատեսային կայանները, այցելեք [url] կայքէջ կամ զանգահարեք [###-###-####] հեռախոսահամարով:

2. The [Agency] requests everyone within a ½ mile radius of [location] to get inside and remain indoors. Bring your pets indoors. More information to follow. [url]
2. [Agency]-ը խնդրում է բոլորին, ովքեր գտնվում են [location]-ից ½ մղոն շառավղով հեռավորության վրա, մտնել ներս և մնալ տանը: Ներս բերեք ձեր ընտանի կենդանիներին: Հետևեք լրացուցիչ տեղեկություններին: [url]

## Short Messages (Mass Notification Alerts)
## Կարճ հաղորդագրություններ (Զանգվածային ծանուցումների ահազանգ)

2. Hazardous Release. All within ½ mi of [location]. Get Inside. Stay Inside. Stay Tuned.
2. Վտանգավոր արտանետումներ: [location]-ից ½ մղոն հեռավորության վրա գտնվող բոլորին: Մտեք փակ տարածքներ: Մնացեք ներսում: Հետևեք մեր հաղորդագրություններին:

# Weather Awareness Sample Messages
## Եղանակային կանխատեսումների իրազեկման հաղորդագրության նմուշներ

### Long Messages (Mass Notification Alerts)
### Երկար հաղորդագրություններ (Զանգվածային ծանուցումների ահազանգ)

3. [Agency] is reporting mandatory evacuation order for [Location] due to potential flooding. Take the following protective actions and leave immediately: 1. Gather all family members or individuals. 2. Gather all pets 3. Gather only essential items. 4. Be sure to bring essential medications with you. 5. Turn off all appliances and lights in your home. 6. Lock your home. The evacuation route is: [Evacuation Route] An Evacuation Center is open at [Name and Location of Evacuation Center]. For more information, please tune into local radio and television stations, visit [url], or call [###-###-####].
3. [Agency]-ը տալիս է [Location]-ի պարտադիր տարհանման հրաման՝ հնարավոր ջրհեղեղի վտանգով պայմանավորված: Ձեռնարկեք հետևյալ պաշտպանիչ քայլերը և անմիջապես հեռացեք. 1. Հավաքեք ընտանիքի բոլոր անդամներին կամ անհատների: 2. Հավաքեք բոլոր ընտանի կենդանիներին: 3. Հավաքեք միայն առաջին անհրաժեշտության իրերը: 4. Անպայման ձեզ հետ վերցրեք անհրաժեշտ դեղամիջոցներ: 5. Անջատեք ձեր տան բոլոր սարքերն ու լույսերը: 6. Կողպեք ձեր տունը: Տարհանման երթուղին հետևյալն է. [Evacuation Route] Տարհանման կենտրոն է բացվել [Name and Location of Evacuation Center]-ում: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք հետևել տեղական ռադիո ու հեռուստաալիքներին, այցելեք [url] կայքէջը կամ զանգահարեք [###-###-####] հեռախոսահամարով:

3. The National Weather Service is predicting flooding in [Location] within the next 24 hours. [Agency] are advising residents who live in this area to be prepared for potential evacuation at any time. Information on how to prepare to evacuate is [url]. Updates to follow.
3. Եղանակային կանխատեսումների ազգային ծառայությունը [Agency]-ում ջրհեղեղ է կանխատեսում առաջիկա 24 ժամվա ընթացքում: [Agency]-ը խորհուրդ է տալիս բնակիչներին, ովքեր ապրում են այս տարածքում, ցանկացած պահի պատրաստ լինել հնարավոր տարհանման: Տարհանմանը պատրաստվելու մասին տեղեկությունը կարող եք գտնել [url] կայքէջում: Խնդրում ենք հետևել հաղորդագրություններին նոր տեղեկությունների համար:

### Short Messages (Mass Notification Alerts)
### Կարճ հաղորդագրություններ (Զանգվածային ծանուցումների ահազանգ)

3. [Weather Hazard] for [Location] Avoid area. Turn Around-Don't Drown. Stay tuned for updates, [url].
3. [Weather Hazard] [Location]-ի համար: Խուսափեք այդ տարածքից: Շրջանցեք. Մի մտեք ջրի մեջ: Հետևե՛ք ռադիոալիքի և [url]-ի հաղորդագրություններին նոր տեղեկությունների համար:

# Active Shooter Sample Message
## Գործող հրաձիգի մասին հաղորդագրության նմուշ

### Long Messages (Mass Notification Alerts)
### Երկար հաղորդագրություններ (Զանգվածային ծանուցումների ահազանգ)

4. [Agency] reporting an active shooter near [location]. Avoid the area. If you are near [Location], get inside, stay inside, and take the following protective measures: 1. Go inside immediately and stay inside your residence. 2. Bring pets indoors only if you can do so quickly. 3. Close and lock all windows and doors. 4. Call 911 immediately if you have a true emergency or hear or see any suspicious activity in or near your location. You will be advised when your safety is no longer at risk. For more information, please tune to local radio and television stations, visit [url], or call [###-###-####].
4. [Agency]-ը հաղորդագրություն է տարածել [Location]-ի մերձակայքում գործող հրաձիգի մասին: Խուսափեք այդ տարածքից: Եթե դուք մոտ եք [Location]-ին, մտեք փակ տարածք, մնացեք ներսում և ձեռնարկեք հետևյալ պաշտպանիչ միջոցները. 1. Անմիջապես ներս մտեք և մնացեք ձեր բնակության վայրում: 2. Կենդանիներին ներս բերեք միայն այն դեպքում, եթե դուք կարող եք դա անել արագ: 3. Փակեք ու կողպեք բոլոր դռներն ու պատուհանները: 4. Անհապաղ զանգահարեք 911, եթե դուք իսկապես արտակարգ իրավիճակում եք հայտնվել կամ եթե լսեք կամ տեսնեք որևէ կասկածելի գործողություն ձեր գտնվելու վայրում կամ մոտակայքում: Ձեզ հրահանգներ կտրվեն, երբ ձեր անվտանգությունն այլևս վտանգված չլինի: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք միացնել տեղական ռադիո և հեռուստատեսության ալիքները, այցելել [url] կայքէջ կամ զանգահարել [###-###-####] հեռախոսահամարով:

4. [Agency] is reporting mandatory evacuation order for [Location] due to an active shooter. Take the following protective actions and leave immediately: 1. Gather all family members or individuals. 2. Gather all pets 3. Gather only essential items. 4. Be sure to bring essential medications with you. 5. Turn off all appliances and lights in your home. 6. Secure all doors and windows. The evacuation route is: [Evacuation Route] An Evacuation Center is open at [Name and Location of Evacuation Center]. For more information, please tune into local radio and television stations, visit [url], or call [###-###-####].
4. [Agency]-ը տալիս է [Location]-ի պարտադիր տարհանման հրաման՝ գործող հրաձիգի վտանգով պայմանավորված: Ձեռնարկեք հետևյալ պաշտպանիչ քայլերը և անմիջապես հեռացեք. 1. Հավաքեք ընտանիքի բոլոր անդամներին կամ անհատների: 2. Հավաքեք բոլոր ընտանի կենդանիներին: 3. Հավաքեք միայն առաջին անհրաժեշտության իրերը: 4. Անպայման ձեզ հետ վերցրեք անհրաժեշտ դեղամիջոցներ: 5. Անջատեք ձեր տան բոլոր սարքերն ու լույսերը: 6. Կողպեք ձեր տունը: Տարհանման երթուղին հետևյալն է. [Evacuation Route] Տարահանման կենտրոն է բացվել [Name and Location of Evacuation Center]-ում: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք հետնել տեղական ռադիո ու հեռուստաալիքներին, այցելեք [url] կայքէջը կամ զանգահարեք [###-###-####] հեռախոսահամարով:

4. As of [time], [Agency] advise public to avoid area of [Insert Location]. Officers are responding to an active shooter. Those located in the area should seek shelter and mute phones. If engaged with the shooter, RUN (ESCAPE), HIDE, FIGHT. Please go to [url] for additional information and standby for further instruction.
4. [time]-ի դրությամբ [Agency]-ը հանրությանը խորհուրդ է տալիս խուսափել [Insert Location] տարածքից: Սպաները փոխհրաձգության մեջ են մտել գործող հրաձիգի հետ: Նրանք, ովքեր գտնվում են տարածքում, պետք է ապաստան փնտրեն և անջատեն հեռախոսները: Եթե դեմ առ դեմ հանդիպեք հրաձիգին, ՎԱԶԵՔ (ՓԱԽԵՔ), ԹԱՔՆՎԵՔ, ԴԻՄԱԴՐԵՔ: Խնդրում ենք այցելել [url] կայքէջ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար և ոչինչ չձեռնարկեք, մինչև հետագա հրահանգները:

## Short Messages (Mass Notification Alerts)
## Կարճ հաղորդագրություններ (Զանգվածային ծանուցումների ահազանգ)

4. Active shooter near [Location]. Avoid Area or Escape, Fight. Stay tuned in for updates.
4. Գործող հրաձիգ [Location]-ի մոտ: Խուսափեք տարածքից կամ փախեք, դիմադրեք: Հետևե՛ք ռադիոհաղորդագրություններին նորությունների համար:

# IPAWS Messaging
# Հանրային ահազանգման և նախազգուշացման միացյալ համակարգի հաղորագրություններ

While it is impossible to have pre-scripted message templates for every possible hazard, those responsible for alerts and warnings should prepare templates ahead of time. Messages should give clear direction on protective actions to be taken by the public.

Թեև անհնար է նախապես գրված հաղորդագրությունների ձևանմուշներ ունենալ յուրաքանչյուր հնարավոր վտանգի դեպքում, այդուհանդերձ, վտանգի մասին ահազանգման և նախազգուշացման համար պատասխանատու մարմինները պետք է նախօրոք պատրաստեն ձևանմուշներ: Հաղորդագրությունները պետք է հստակ ուղղորդեն հանրությանը, թե ինչ պաշտպանիչ գործողություններ պետք է կատարեն:

Short messages (90 characters) work best if the content is presented in the following order:

Կարճ հաղորդագրությունները (90 նիշ) արդարացված են, եթե բովանդակությունը ներկայացված է հետևյալ հաջորդականությամբ.

**[Source], [protective action], [hazard], [location], [duration/expiration time]**

**[Աղբյուրը], [պաշտպանիչ գործողությունը], [վտանգը], [տարածքը], [տևողությունը/ավարտի ժամանակը]:**

Long messages (360 characters) work best if the content is presented in the following order:

Երկար հաղորդագրությունները (360 նիշ) արդարացված են, եթե բովանդակությունը ներկայացված է հետևյալ հաջորդականությամբ.

**[Source], [hazard], [protective action], [location], [duration/expiration time].**

**[Աղբյուրը], [վտանգը], [պաշտպանիչ գործողությունը], [տարածքը], [տևողությունը/ավարտի ժամանակը]:**

# Example IPAWS Messages
# Հանրային ահազանգման և նախազգուշացման միացյալ համակարգի հաղորագրության նմուշներ

## Fire:
## Հրդեհ.

### Long Messages (360 Characters)
### Երկար հաղորդագրություններ (360 նիշ)

1. [Agency]. FAST-SPREADING FIRE in [Insert Location]. IMMEDIATE DANGER. EVACUATE NOW. FAILURE TO EVACUATE could result in INJURY or DEATH. Tune in to [Location] for updates. For more info, visit [url].

1. [Agency]: ԱՐԱԳ ՏԱՐԱԾՎՈՂ ՀՐԴԵՀ [Insert Location]-ում: ԱՆՄԻՋԱԿԱՆ ՎՏԱՆԳ: ԱՆՀԱՊԱՂ ՏԱՐՀԱՆՈՒՄ: ՉՏԱՐՀԱՆՎԵԼՈՒ դեպքում կարող եք ՎԻՐԱՎՈՐՎԵԼ կամ ԶՈՀՎԵԼ: Թարմացված տեղեկությունների համար խնդրում ենք հետևել [Location]-ի ռադիոհաղորդագրություններին: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [url] կայքէջը:

## Short Messages (90 Characters)
## Կարճ հաղորդագրություններ (90 նիշ)

1. [Agency] Evacuate Now fast-moving fire [Location]. For more information visit [url], or call [###-###-####].
1. [Agency] Անհապաղ տարհանում: Արագ տարածվող հրդեհ [Location]-ում: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [url] կայքէջը կամ զանգահարեք [###-###-####] համարով:

# Flood:
# Ջրհեղեղ.

## Long Messages (360 Character)
## Երկար հաղորդագրություններ (360 նիշ)

2. [Agency]. SEVERE FLOODING in [Location]. IMMEDIATE EVACUATION required! EVACUATION ZONE. EVACUATE NOW via designated routes: [Evacuation Route]. Stay updated through [url]. EXPIRATION: Until further notice. FOLLOW OFFICIAL INSTRUCTIONS and prioritize safety. Shelters information available at [url].
2. [Agency]. ԱՌԱՏ ՋՐՀԵՂԵՂ [Location]-ում: Անհրաժեշտ է ԱՆՀԱՊԱՂ ՏԱՐՀԱՆՎԵԼ: ՏԱՐՀԱՆՄԱՆ ԳՈՏԻ: ՏԱՐՀԱՆՎԵԼ նախանշանակված երթուղիներով: [Evacuation Route]. Հետևել թարմացված նորություններին [url] կայքում: ԱՎԱՐՏԸ. Մինչև հետագա իրազեկումը: ՀԵՏԵՎԵՔ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻՆ և առաջնահերթ համարեք անվտանգությունը: Ապաստարանների մասին տեղեկությունները հասանելի են [url] կայքում:

## Short Messages (90 Character)
## Կարճ հաղորդագրություններ (90 նիշ)

2. [Agency] FLOODING in [Location]. EVACUATE now! Info: [url].
2. [Agency] ՋՐՀԵՂԵՂ [Location]-ում: Անհապաղ ՏԱՐՀԱՆՈՒՄ: Տեղեկությունները՝ [url] կայքէջում:

## Debris Flow:
## Սելավ.

### Long Messages (360 Character)
### Երկար հաղորդագրություններ (360 նիշ)

3. EMERGENCY ALERT: [Agency]. Debris Flow in [Location]. PREPARE to evacuate potential area. Prepare essential items, secure property, and be ready to leave if instructed. EXPIRATION: Until further notice, prioritize safety, follow official instructions and emergency information [url].
3. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ԱՀԱԶԱՆԳ. [Agency]. Սելավ [Location]-ում: Պատրաստ եղեք տարհանման հավանական վտանգի տարածքից: Պատրաստեք անհրաժեշտ իրերը, ապահովեք գույքի անվտանգությունը և պատրաստ եղեք անհապաղ մեկնելու հրահանգ ստանալուն պես: ԱՎԱՐՏԸ. Մինչև հաջորդ իրազեկումը, առաջնահերթ համարեք անվտանգությունը, հետևեք պաշտոնական հաղորդագրություններին և արտակարգ իրավիճակի մասին հաղորդումներին [url] կայքէջում:

### Short Messages (90 Character)
### Կարճ հաղորդագրություններ (90 նիշ)

3. [Agency] FLOOD ALERT: Prepare to evacuate [Location]. Until further notice.
3. [Agency] ՋՐՀԵՂԵՂԻ ՄԱՍԻՆ ԱՀԱԶԱՆԳ. Պատրաստ եղեք տարհանման [Location]-ից: Մինչև հաջորդ իրազեկում:

## Hazardous Materials Release:
## Վտանգավոր նյութերի արտանետումներ

### Long Messages (360 Character)
### Երկար հաղորդագրություններ (360 նիշ)

4. [Agency]. HAZMAT SPILL in [Location]. AVOID the area at [Detailed Location]. STAY AWAY from the vicinity. Follow instructions from [Agency]. Stay updated via [url]. EXPIRATION: Until [Time]. PRIORITIZE SAFETY. For more info, visit [url].
4. [Agency]: ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ [Location]-ում: ԽՈՒՍԱՓԵՔ [Detailed Location]-ի տարածքից: ՀԵՌՈՒ ՄՆԱՑԵՔ մոտակայքից: Հետևեք [Agency]-ի հրահանգներին: Հետևեք տեղեկությունների թարմացումներին [url] կայքէջով: ԱՎԱՐՏԸ. Մինչև [Time]: ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [url] կայքէջ:

### Short Messages (90 Character)
### Կարճ հաղորդագրություններ (90 նիշ)

4. [Agency] SPILL in [Location] AVOID area. Info: [url].
4. [Agency] ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ [Location]-ում: Խուսափեք տարածքից: Տեղեկությունների համար՝ [url] կայքէջ:

## Earthquake:
## Երկրաշարժ.

### Long Messages (360 Character)
### Երկար հաղորդագրություններ (360 նիշ)

5. Earthquake detected by USGS. Strong ground shaking, take cover under sturdy furniture, quake centered in [Location] expected to last 30-60 seconds. Visit [url] for more information.
5. Միացյալ Նահանգների երկրաբանական հետազոտության (USGS) կողմից հայտնաբերված երկրաշարժ: Գետնի ուժգին ցնցումներ, ծածկվեք պինդ կահույքի տակ, երկրաշարժի օջախը գտնվում է [Location]-ում, ակնկալվում է, որ կտևի 30-60 վայրկյան: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [url] կայքէջը:

### Short Messages (90 Character)
### Կարճ հաղորդագրություններ (90 նիշ)

5. Earthquake Imminent Take Cover Now strong shaking [Location] for next 30-60 seconds.
5. Վերահաս երկրաշարժ Մտեք ծածկի տակ Այս պահին ուժեղ ցնցումներ [Location]-ում մոտակա 30-60 վայրկյաններին:

## Stay Connected. Be Informed

## Մնացե՛ք կապի մեջ: Եղեք տեղեկացված: